ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, **www.foi.am**

20.07.2023
351-25

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարար Ռոբերտ Խաչատրյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

2021 թվականի փետրվարի 11-ին ՀՀ Կառավարության N 183-Լ որոշման համաձայն հավանության է արժանացել 2021-2025 թթ. համար նախատեսված Հայաստանի թվայնացման ռազմավարությունը և Հայաստանի թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագիրը և արդյունքային ցուցանիշները: Ռազմավարության 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված է. *«Բոլոր գերատեսչությունների և գործարար ոլորտի հետ համագործակցության արդյունքում նախատեսվում է իրականացնել համալիր կրթական ծրագրեր հանրության բոլոր տարիքային և սոցիալական խմբերի համար, Հայաստանի թվային փոխակերպման օրակարգը իրականություն դարձնելու, ապագայի տնտեսության մարտահրավերներին և կիբեռանվտանգության զարգացող պահանջներին համապատասխանելու համար»:*

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ այն մասին, թե մինչ օրս ինչ քայլեր են իրականացվել վերոհիշյալ կետով սահմանված միջոցառումների իրականացման նպատակով:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան